# ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՓՈԽՆԱԽԱԳԱՀԸ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հոկտեմբերի 7-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց պաշտոնական այցով Հայաստան ժամանած Հնդկաստանի փոխնախագահ Բհարիոն Սինգհ Շեխավատին՝ ՀՀ ԱԺ փոխնախագահ Վահան Հովհաննիսյանի, Հնդկաստանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Աշոտ Քոչարյանի և ՀՀ-ում Հնդկաստանի արտակարգ և լիազոր դեսպան Դիպակ Վոհրայի ուղեկցությամբ:

«Ուրախ եմ, որ Ձեր այցը այստեղ բավականին խանդավառություն և ուրախություն է ստեղծել, որովհետև Ձեր այցով վերանորոգվում են երկու ժողովուրդների միջև ձևավորված պատմական բարի հարաբերությունները, որոնց վկայությունն այսօր Հնդկաստանում գտնվող հայոց եկեղեցիները, Կալկաթայի Մարդասիրական ճեմարանը և բազում այլ հիշատակություններն են: ...Չենք եղել ձեր երկրում, սակայն ճանաչում ենք այն և սիրում ենք Հնդկաստան երկիրը և բարությունը ձեր ժողովրդի»,- ասաց Ամենայն Հայոց Հայրապետը՝ բարի գալուստ մաղթելով Հնդկաստանի փոխնախագահին և նրա գլխավորած պատվիրակությանը և ուրախություն հայտնելով երկու պետությունների միջև տնտեսության, կրթության և մշակույթի ոլորտներում զարգացող սերտ համագործակցության առիթով:

Վեհափառ Հայրապետն առանձնակի գոհունակությամբ անդրադարձավ այն բարի և ջերմ հարաբերություններին, որ առկա են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Հնդկաստանի դեսպանատան միջև: Նորին Սրբությունը, ի դեմս փոխնախագահի, իր շնորհակալությունը և երախտագիտությունը հայտնեց նաև Հնդկաստանի իշխանություններին հայ ժողովրդի՝ պատմության ընթացքում կերտած հուշարձանների նկատմամբ դրսևորվող հոգածության և ուշադրության, ինչպես նաև Հայաստանյայց Եկեղեցուն ցուցաբերվող աջակցության համար, որի շնորհիվ այսօր մի քանի երիտասարդ հոգևորականներ Հնդկաստանում կատարելագործում են իրենց գիտելիքները գիտական տարբեր ասպարեզներում:

Իր հերթին Հնդկաստանի փոխնախագահ Բհարիոն Սինգհ Շեխավատին, ուրախություն հայտնելով հնագույն քրիստոնյա երկրում գտնվելու առիթով, ասաց. «Ես այստեղ եմ որպես ուխտավոր: Սա սուրբ վայր է՝ լցված խաղաղության և նվիրումի աստվածային ոգով: Ես մեծապես տպավորված եմ հավատի հանդեպ հայ ժողովրդի նվիրումով և վերջինիս համար կրած չարչարանքներով, հավատ, որը պահպանել է ձեզ փորձությունների և դժվարությունների ժամանակ: Թող աստվածային այս սուրբ վայրը շարունակի տարածել խաղաղության և համընդհանուր եղբայրության պատգամը»: Պրն Շեխավատին նաև շնորհակալություն հայտնեց Նորին Սրբությանը՝ կործանարար ցունամիի առիթով հայտնած ցավակցության համար:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց նաև ահաբեկչության խնդրին և աշխարհի առջև ծառացած մարտահրավերներին, որոնց հաղթահարման մեջ կարևորվեց կրոնների առաքելությունը: Նշվեց, որ առանց կրոնների միջև համերաշխության չի կարող եղբայրություն հաստատվել ժողովուրդների և պետությունների միջև: Այս ամենի մեջ կարևորվեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու դերը:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը: